

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

### “ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԻԳԱԾՔԱԿԱԾՈՒՅԹԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԻՆ ԵՒ ՄԻԶՆԱԴՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ” (V-XV դդ.)

Գ. ԶՈՀՈՒԿԱՆՈՒՄ — Երևան — 1954, էջ 395

Է. — Առաջին մաս . — Առաջին գլուխ . — Նկատի կ'առնուին յաջորդաբար Դիոնիսիոս Թրակացիի «Քերական» Արուեստա երկի թարգմանութեան պարագաները և անոր հայերէն մեկնութիւնները 5-10րդ . դարերուն . Յունաբան դպրոցը և Դիոնիսիոս Թրակացիի քերականութեան թարգմանութեան թուականը . թարգմանիչի անձնաւուրութիւնը . թարգմանիչի կողմէն բնազրին մէջ կատարուած փոփոխութիւնները . հայերէնի ուսումնասիրութեան առաջին քայլերը և անոնց մէջ երեան եկող թիերութիւնները . թարգմանութեան յունաբանութիւնները . թարգմանութեան հզրաբանութիւնները . թարգմանութեան եզրաբանութիւնը՝ որ հիմք կը կազմէ մինչև խոկ մեր արդի քերականական լեզուին :

Գ. — Երկրորդ գլուխ . — Կը զերլուծուին հայ քերականներու երկերը : — 1) Դաւիթ . — «Քերականական Արուեստա»ի մասին իր հիմնական տեսակէտները . իր հայեացքը մարդկացին ձայնի և «տառի» մասին . ստուգաբանական փորձերը . խօսքի մասներու բաժանումը : — 2) Անանուն Մեկնիչ . — Տառի . վանկի . բասի և բանի առաջնահաւորումը . «անուան» ըմբռնումը Անանունի մօտ . տեղեկութիւնները բարբառներու մասին . ձեաբանական դիտողութիւնները : — 3) Մոզոէս Քերթող . — Քերականական արուեստի ըմբռնումը . հնչաբանական տեղեկութիւնները . ձեաբանական - բառակազմական դիտողութիւնները . — 4) Ստեփանոս Սիւնեցի . — Կեանքը և քերականական երկերը . քերականութիւններ և իր առարկան . քերականութեան սմասերու բաժանումը . զերծանութեան մասին . դիտողութիւններ ստառի մասին . բասի

արանից մասին . ձեաբանական - բառակազմական և այլ կարգի դիտողութիւններ : — 5) Համամ Արսելցի . — Համամի սկիերու . ծութիւն Քերականին երկը :

1) Դաւիթ . — Դաւիթ կը հակի զէպի բանապատշտութիւնը՝ քերականութեան դերի իր սահմանման մէջ . կը հակազդրէ տառը և զիրը . Դաւիթ ստուգաբանական երեք ձեեր կը նշէ . «Ստուգաբանութեան ձեք են երեք, յիրէն, յարուեատէն, ի ձայնէն . և յարացոյց առաջնումն սափոր, և երկրորդին վայշիաս, և երրորդին նննդուկի» : Առաջին պարտգային, Դաւիթ կ'ակնարկէ առարկայի ձեին . — օր . սափոր 2 մասերու կը բաժնէ, իրեք թէ սա և փոր բառերէն կազմուած ըլլայ (այսինքն փոր ունեցող աման, փորի նմանութիւն ունեցող աման) . Երկրորդ պարտգային, նկատի ունի արհեստաւորին յարաբերութիւնը գործողութեան առարկայի հետ . — վայշիասը այն անձնաւորութիւնն է օր փայտ կը կտրէ : Երրորդ պարտգային, անունը իր հնչյունով կը յիշեցնէ առարկան : «Ճննդուկի» նմանութիւն ունի նննդուկի ծլվալուն, ճտճտալուն հետ : Այս կամայական ստուգաբանութիւններէն վերջ . Դաւիթ կ'աւելցնէ թէ ստուգաբանութիւնը վերապահուած է միայն խոհեմներուն . օհայց ոչ ամենեցուն է զիւտա այս, այլ խոհեմազունիցն և եթու : Դաւիթին, ինչպէս նաև հիներուն ստուգաբանական վերլուծումներուն զիսաւոր թիերութիւնը կը կայանայ օտար լեզուական տուեալները չօգտագործելուն մէջ : Կը բաւարարուին միայն հայերէնով, ինչ որ զիրենք կը մզէ երեակայածին հնաթագրութիւններու :

2) Անանուն Մեկնիչ . — Զայնաւորներու և բազաձայններու միջև «միջակք» կը նկատէ ն, լ և լ տառերը : Երեք տեսակ վանկեր կը զատորոցէ . — 1) «Վանդ»՝ օր կը ներկայացնէ ձայնաւորը՝ որ կը զուգորդուի իրմէ առաջ կամ վերջը զրուած բաղաձայնով մը : — 2) «Փաղառութիւն» կամ «հէզ»՝ օր կը ներկայացնէ ձայնաւորի մը կամ երկբարբառի մը չըջափակումը բաղաձայններով : — 3) «Պիտուկապէս» վանկ՝ օր կը բաղկանայ միայն մէկ ձայնաւորէ : Անանուն լծորդութիւնը կիրարկելի կը նկատէ օրքան տաղաչափութեան, նոյնքան բարբառներու մէջ, նկատի ունենալով հըն-

չարանական տարրերութիւններու գոյութիւնը զանազան բարբառներու միջև։ Աձորդութիւն դատարական է ի տաղաջախական կըսոց ուսումնավարժից ումանց, որք ի մակացութեան զեզերանս կացին հանապազ, զի զանամանաշափութիւն բանի լծորդովն չինէին տեղի։ Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ։ Իրաւամբ, Անանուն երկակի թիւը միայն յունարէնի առանձնայատկութիւնը կը նկատէ։ «Եւ պարտէ զիտել, եթէ երկուորականն ըստ լեզուոյ ոչ է, այլ հարստութեան աթենացւոցն և նոցին քերթողաց»։

3) Մովսէս Քերթող։ — Քերականութիւնը իր մօտ բանապաշտական ուղղութիւն ունի։ Քերականը պէտք է առաջնորդուի պատողական հրամաններով։ «Քերթողութիւնը» իր մօտ հոմանիշ կը դառնայ քերականութեան։ Մովսէս յստակօրէն չի զանապաներ քերականութիւնը իմաստասիրութենէն։ Քանի որ խօսքի մասերը օգտնողները իմաստասէրները եղած են, ուրեմն Մովսէս կը հետեցնէ թէ իմաստասէրները նաև առաջին քերականներն են։ իսկ քերականները իրենց կարգին պէտք է որ իմաստասէրները ըլլան։ «Եւ քերթուք են իմաստասէրքն առաջինք, որ զբանին զարն զմասունս, քանզի քերթողութիւն է ճանաչել զգէմս խաւսիցն, որ ինքն տեղեակ է լեզուին, զոր քերեալ որբէ և բերէ ի ցանկութիւն լսողացն»։ Կը զատորոչէ զիրը և տառը, զիրը նկատելով որպէս տառի մարմնացումը։ Անունը կը գերազանէ բայցէն, որովհետեւ անունը էութեան արտայայտիչն է, իսկ բայց՝ ներգործութեան։ Այլ յառաջադասութիւնս սորա քան զբայ, զի սա զէութեան նշանակութիւն ունի, իսկ բայ զներգործութեան»։

4) Ատեփանոս Ախոնցի։ — Քերականութիւնը սերտօրէն կը կտապուի զրականութեան հետ։ Քերականութիւնը չի նպատակագրեր միայն ուղղագրութիւն և ուղղիդ խօսելու արուեստը սորզեցնել, այլ նախապայման մըն է նաև զրական ստեղծագործական աշխատանքի։ «. . . Եւ ինքեանք ըստ հրամայեալ յեղանակս սորա արասցեն ստեղծումն բանի պիետիկոսարար»։ Լեզուներու իմացումը չափազանց օգտակար կը

գտնէ ստուգաբանութեան համար։ «Արդ լեզուս ասէ, որ չուրջ զքե սահմանակիցք աշխարհք իցեն, զիտութիւն լեզուաց նոցա, վասն զի կարի աւզտակարք են այսք առ ստուգաբանութիւնն»։ Խոյնպէս, անհրաժեշտ կը գտնէ մայրենի լեզուի բարբառներու ծանօթացումը, և շահեկան տեղեկութիւններ կու տայ հայ բարբառներու չուրջ։ «Եւ զարձեալ զքու լեզուիդ զիտելն զրովանդակ զրառուն զեզերականս, որպէս զկորճայն և զՏայեցին և զնութայինն և զՉորրորդ Հայեցին և զԱնեպերացին և զԱրդարացին»։ Բարբառները երկու խումբի կը բաժնէ։ — 1) Ուստանիկ, միջերկրեայ, որոնք գրաբարի հիմ ծառայած են, հետեւաբար մշակուած մատենագիրներու կողմէ։ 2) Եզերականս, որոնք Ախոնցին եօթը խումբերու կը բաժնէ, և որոնց տիրացումը ստիպողական կը գտնէ։ Տեղեկութիւններ կու տայ նաև Հայոց մէջ զործածական եղող գրական սեսերու չուրջ։ — Կատակերգութիւնը սիրելի եղած է հայ ռամիկ զամին, ուր ծաղրուած են ծովերը, ընչառէրները և ուրիշներ, ողբերգութիւնը նոյնացուած է մեսելներու վրայ կատարուած սուզին ու լացին։ Իսկ գուսանական տաղերը շատ յարգուած ու փնտուած են եզեր։ Յայերը առողջութեան չորս նշաններ կը զատորոցէին։ ոլորտակ, ամանակ, հազար և կիրք։ «Տառ» ըսելով կը հասկնայ մեր արգի հհնչումը։

5) Համամ Արեելցի։ — Գրած է «Քերլուծութիւն Քերականին» երկը։ Զունի հնութեան իմաստասիրութեան և զիտութեան պաշարը։ Իր ստուգաբանութիւնները կամայական են։ Նորութիւն մը չի բերեք հայերէնի քերականութեան տեսական հարցերու կազմաւորման մէջ։ Դիտողութիւնները մեծաւ մասամբ հիներու ձախող կրկնութիւններն են։

Պ. — Երկրորդ մաս։ — Նկատի կ'առնըւին «Քերականական արուեստի» յետագայ զարգացումը և «Փրչութեան արուեստի» հետ առնչուած ուղղագրական կէտագրական աշխատանքիւններու երեան գալը 11-15րդ դարերուն։ Հին քերականական երկերու արծարծումը և միաւորումը, ստուգաբանութիւնը զիտական հիմերու վրայ զներու առաջին փորձերը, «Քերականական

արուեստից նկատմամբ հետաքրքրութեան աճման պարագաները:

6) Գրիգոր Մազիստրոս. — Պարարած է Թոնդրակեցիներու գէմ: Զբաղած է նաև խմաստափրութեամբ, բժշկութեամբ և ուսողութեամբ: Իր ալլեկութիւնն քերական նին երկը զրած է իր որդի Վահրամի խնդրանքին վրայ, որ յետազային գարձաւ Պրիգոր Վակայասէր կաթողիկոս: Մազիստրոս կը նոյնացնէ քերականութիւնը զրականութեան հետ: Քերականը պէտք է տիրանայ զրական բոլոր ստեղծագործութիւններուն, թափանցէ անոնց իմաստի բոլոր նրաւթիւններուն, և կարողանայ սխտրութեամբ մաքրել զրան և զրայ և զգիր մաքուր և վճիռ առասութեամբ: Մազիստրոս կը ջանայ ստուգաբանութիւնը զիտական հիմունքներու վրայ դնել: Մազիստրոս կը զգուշացնէ ուրիշ լեզուներէ փոխառուած բառերը սեփական լեզուի տառեալներով ստուգաբանելը, ինչպէս կը կատարէին իր նախորդները: Այդ բառերը հայերէնի գիտաւոր չեն, անոնք առնուած են ըրջակայ լեզուներէն, ուրիմն կրնան ստուգաբանուիլ միայն փոխատու լեզուի օրինաչափութիւններովք: «... որպէս փակելին, որ է յունարէն, քանզի ոչ զոյր մեր և ոչ էր սովորութիւն: և սուրբ, որ է սպիրուն, և կալվածար, որ է կալամառ, այս սինքն աման զրչի»:

7) Արիստակէս. — Գրած է «Վերլուծութիւն բացերեալէս բազմազան բայից և բայից յօդնախումբ շարագրութեամբ աւրարեալ զատ Արիստակիսի գրչի ի խոնդրոյ բազմաց յարհեստ զրչութեանց: Համեստաբար խօսելով սեփական ուժերու տկարութեան մասին, իր աշխատաւութիւնը թարգմանիներու վայել զործ մը կը նկատէ: «... զի զործ այս սրբոց թարգմանչացն էր անգաւոր, ընտրելագոյն վարժապետացն և ոչ իմում անմատքրութեան և անկարութեան անձինու: Նոյնինկ այն խորունկ համազումը ունի, թէ իր զործը ծաղրացները պիտի զգոն իրենց սխալը, երբ ջանան զայն ուսումնափրել. «Են բազումք, որ ծաղք արացեն զիրս այս, զոր ի սմա հաւաքեալ կան, որպէս է և մեր ազգիս հապատաւթիւն և բրտագութիւն, բայց եթէ զորդ հնար, որ խոնարհէր այն այր յայնց բարուց

խմովս ազաշանուաք և սակաւ մի աշխատէր ի սմա նա իմանայր, թէ զինչ է սա և կամ զորպիսի հմտականութեամբ չահ աւզտի ունի և յամենայն աստուածային զիրս կարի պիտանի որ եթէ յանդպնութիւն է ասելու, յորժամ աւզտի ի սմանէ և զարժի սոված, նա ինքն առ ինքեան զինքն ըմբերանէ, քանզի զինչ կարեօր պէտք էին թարգմանչացն սրբոց թողուզ թիւզանգիոն և ընթանալ յԱթէնս, թէ ոչ վասն հանտոր այսր քերական գծից: Արիստակէս զիրիչներու անհմտութիւնը կը նկատէ մանաւանդ յ-ի փոփոխական ուղղագրութեան մէջ, ուստի կ'առաջարէկէ 10 կանոններ յ-ի միասնական ուղղագրութեան համար: Իր երկի վերջաւորութեան, զրած է նաև ուղղագրական բառարան մը, իր բնոյթով առաջինը հայ իրականութեան մէջ: Կը լրացնէ ուղղագրական բառարանի մը բոլոր պահանջները:

8) Գէորգ Ակնառացի. — Կու տայ տուղագարձի կանոններ, որոնք մատնակի փոփոխութիւններով կը չարունակուին մինչև մեր օրերը: Տառը և զիրը կը նոյնացնէ: Վանկը կը կոչէ նաև «Էէզ» կամ «փաղառութիւն»: Վանկին էական տարրը ձայնաւորնէ, որուն կրնան ընկերանալ մէկ քանի բաղաձայն: մէկ ձայնաւորով վանկը ոպիտակէ, որ հազուագէպէ է, մինչզեռ բաղաձայնի մը կամ բաղաձայններու հետ չարգասուած ձայնաւորը ստիրապէսս վանկէ, կամ խսկական վանկ:

9) Վարդան Արեելցի. — Հեղինակն է «Յազագս Մեկնութեան Քերականին» և «Վասն Բանին Մասանց» երկերուն: Ունի չահնկան տեղեկութիւններ բարբառներու մասին: «Զեշն և զայրն զատէ ի միում էէզի և զկորձէիցն յայտնէ մեզ զթանձր և զբարարիկոն բառն, զի նոցայցն է այս բառու զեամ, զոր մեք զամ սանքք, զի զայս Բարգուշտեցին ասէ և Գարողացին, և զյղարկեմ-ն և զյղեմ-ն յղոմ և զլոյսն լուս ասեն ումանք և զգայլն զոյլ և զգառն զոսնոս: Վարդանի նպատակն է ներկայացնել ինչ որ կայ իրօք լեզուի մէջ, չըսնագատել անոր երբեք խորթ քերականական ձեեր, որոնք միայն կ'աղճատեն լեզուն: Աւասն զի հելլենացիք, յոյնք և հոռվմէացիք յոյժ ընտրութիւն առնեն վասն միաւորին և երկուորականին: Բոկ մեր ազգս

ոչ ունի այսպիսի քննութիւն վասն փարթամութեան և արձակ լեզուի մերոյ։ Քերականութիւնը ունի իր որոշակի առարկան՝ «մասունք բանին»։ Ակասն Բանին Մասանցաը կը չօշափէ մանաւանդ հայերէնի չարահիւստկան հարցերը։

10) Յազդաննէս Երգնկացի. — Յաւզգ  
կ'արձանագրէ իշխող տղիտութիւնը, մանա-  
ւանդ իմաստափրական գիտութեանց ան-  
տեսումը իր ժամանակակիցներուն կոզմէ:  
և Եւ յօյժ սրաարեկեալ խոցիմ, յորդամ  
տեսանեմ զազգս մեր անփոյթ արարեալ  
զիմաստափրական ուսմանց և զհմութենէ  
արհեստից բանականաց, մինչ զի զհմուգա-  
մանս անուանց իմաստափրացն զրոց ան-  
տեղեակ գոլով, զորս յաւտնեալ են հարքն  
մեր ի գիրս իւրեանց, զոր ընթեանումք.  
զոր այժմ երկարութիւն համարիմ յիշել  
զանուանսն և կամ զպատճառ հեղգութեան  
ազգիսո: Քերտականութիւնը օբանական ար-  
հեստու է: Քերտականութիւնը կը բազզատէ  
բժշկութեան հետ, որուն նպատակն է ակամ  
զներկայ առողջութիւն պահել կամ զի բաց  
զնացեալն վերստին գարծուցանել, այսպէս  
հմտութիւն քերտականին է զքերթողացն և  
զշարագրացն կամ առողջապէս զաւրութիւն  
գրելոցն պահել, կամ զթիւրեալն և իրը  
հիւանդութեամբ տկարացեալոն քերելով  
և խորութեամբ և դատողական քննու-  
թեամբ բժշկելո: Քերտականութիւնը հմտու-  
թիւն չէ, որովհետև հմտութիւնը վերտահա-  
սու չըլլար պատճառին: ԱԲայց մի ոք սղա-  
լանս կարծիցէ, զի զքերտականութեան հըմ-  
տութիւն, որ է միոյ իրի անպատճառ գի-  
տութիւննօ: Ստուգաբանութեան համար,  
Երզնկացին անհրաժեշտ կը գտնէ չըջակայ  
լեցուներու ծանօթացումը: Լեզուներու  
տարբերութիւնները կը բզիմն արտաքին  
աշխարհի մեր ընկալման տարբերութիւննե-  
րէն: Երզնկացին կը զատորչէ զիրը և  
տառը: Խօսքի մասերուն մէջ կարենար,  
զոյնն է անունը, երկրորդն է բայր:

11) Եսայի նչեցի. — Գլածորի համաշաբանին անուանի գասախօսը կոչուած է նաև սեռամեծ զիլիտսովայց և անյազթ հոետոր։ Զբագած է նաև ձեռագիրներու հաւաքումով։ Գրած է «Մեկնութիւն Քերականն» երկը։ Քերականութիւնը արտևեսաէ, իր բուն բնագաւառը՝ խօսքի մասերու

ուսումնասիրութիւնն է . տեսականօրէն ,  
կարեար քայլ մը կ'արձանագրուի բանասիւ-  
րական քերականութեան ստեղծման մէջ :

12) Յազհաննէս Քանեցի. — Հեղինակն  
է «Համառօտ Հաւաքումն Յաղագս Քերաւ-  
կանին» երկին։ Ազգուած է լատիներէն  
քերականութենէն։ Քերականութիւնը ար-  
ուեստ է։ Զի զատորոչշեր «տառ» և «զիր»  
բառերը։ «Գիր» բառը ստուգաբանօրէն կը  
կապէ «քերել» բայցին հետ ելուքի մասերը  
կը սահմանէ Դիոնիսիոսի հետեւելով։ «Անուն  
է մասն բանի հոլովական . . .»։

13) Φρηβούρ Σωθίεωσή - Ήσυχωτικός αυτοί και βασιστικούς φωράφωνται σήμερα οι περισσότεροι ήδη την περιπέτειαν της γέννησης, όπου μετατρέπεται σε έναν παραπλανητικό παραγόντα της ζωής. Το παραπάνω παρατητικό παραγόντα της γέννησης είναι η πρώτη περιπέτεια της γέννησης, η οποία διατηρείται στην περιπέτεια της γέννησης.

— 1) Բաց զանկի ձայնաւորի փոփոխութիւն, 2) Փակ զանկի ձայնաւորի փոփոխութիւն։ Զի զանազաներ գիրը և տառը՝ «Բանի մասանց»ը կը ստորաբաժնէ երկումասի իմաստասիրական՝ տրամաբանական և քերարականական։ Իմաստառէրքն երկուասեն զմասունք բանի, այսինքն անուն և բայց, որ նշանակէ զեռթիւն և զգործ։ Իսկ քերարականութիւնն առէ, այսինքն անուն, բայց, ընդունելութիւն, յաւղ, զերանուն, նախզիր, մակրայ, չաղկապա։ Իր մօտ կը գերակշռէ իմաստասիրական՝ տրամաբանական բաժնումը։ Եթեք տեսակ գլխազիրներ գոյութիւն ունին, — ծաղկազիր, երկաթաշգիր։

14) Առաքել Միւնեցի. — Քերականութիւնը ամենայն իշխատասիրութեան նախագուռն է: Քերականութիւնը մեկուսացած ճիւղ մը չէ, այլ կապ ունի այլ ճիւղերու հետ, ոմանց հետ ծագմամբ, ուրիշներու հետ բնոյթով և զերով: Քերականութեան ամենէն մօտն է երաժշտութիւնը, որ նոյնաէս կը յինու մարդկային ձայնի վրայ: Քերականութիւնը իր զերով կը կապուի ճարտասանութեան հետ: «Ճի քերականութիւն կարօտանա»<sup>(1)</sup> ճարտասանի պայ-

ծառ բանից, այսինքն զի թէպէտ բանին զիտութիւն քերականին է, այլ պայծ առօւթիւն և զարգարանք և պաճուճանք և պերճացուցանել զրան ճարտասանացն է, և որպէս ամենայն նիւթ կարստի զարգարման, սոյնպէս և քերական ճարտասանինու: Քերականութեան նպատակն է լեզուի կատարելագործումը և ուղղումը: Առուզարանութեան համար, կարեոր է օտար լեզուներու ծանօթացումը: Վկան որոյ պարտէ զամենայն լեզուս զիտել, թէ հնար իցէ: Բայց ոչ զայս ասէ, այլ զիւր ազգի լեզուն միայն, այսինքն զեզերականն, որ է Կորճային, որ են Ասոնցիքն, և զՏայեցին, որ են Տարօնեցիք. և զԽօթացին, որ են Ռէփացիք. և զՉորրորդ Հայեցին, արդ Աւաշին Հայք՝ յԵրամանեկայ ի Պոնտոս, և ի Պոնտոսէ մինչև ի քաղաքն Մելիտինէ. Երկրորդ Հայք Մերտինն և անդի ի Ծոփաց գաւառն, որ է Մանածկերտ և Մուշ. Երրորդ Հայք, և անդի ի քաղաքն Եր(ր)զնկայ և Աևաստ. իսկ սեպհական աշխարհն՝ Մեծ Հայք. Չորրորդ՝ որ է Արարատիան գաւառն և այլն: Եսոյն Ապերաց աշխարհն և Արևինն և Արցախայինն, որ են Խաչենացիք»: Քերականութիւնը և արամարանութիւնը լլուտակորէն չէ զատորոշեր:

Գիրքը ունի երեք յաւելուածներ, ուր յաջորդարար նկատի կ'առնոււին վիճելի և անձ անօթ հեղինակներու վերագրուած քերականական երկերը: — Առաջին յաւելուած. — Դաւթիքի, Մովսէս Խորենացիի, Մամրէ Վերձանողի և Բարսեղի վերագրուող քերականական մանր երկերն ու հատուածները: — Երկրորդ յաւելուած. — Անորոշ ժամանակի հարց ու պատասխանի ձեռք գրուած քերականութիւնները: — Երրորդ յաւելուած. — Անանուն հեղինակներու մանր քերականական աշխատութիւններն ու հատուածները:

Հեղինակը զիւրաւ կրնար խուսափի հետեւել օտար բառերէն՝ սրոնց համարժէքները արդէն գոյութիւն ունին հայերէնի մէջ: — Տրալիցիս փոխանակ աւանդուրիւն ըսելու, անմիկ փոխանակ նինի, պրոբլմ փոխանակ խնդիրի, սուբյեկտիվ փոխանակ ենթակայականի, տերմինաբանութիւն փոխանակ եղբայրականի:

Այս սրբագրելի կէտերէն գերջ, այս գիրքը զգալի պակաս մը կը լրացնէ հայձեռագրական շրջանի քերականազիտութեան մէջ:

ԱՆՈՒՇԱԽԱՆ Վ.Ի. ԶԴՅԱՆԵԱՆ

## ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱԼՕԲԱԺՈՂՈՎ

•

Ազերասանդրիոյ Քրիստոնեայ համայնքներու պետերը, զեղեցիկ գաղափարը ունեցան 1959 տարւոյ սկիզբը, միջյարանուանական ժողովներ գումարելու, որոնց իբր արդիւնք և նախապատրաստական աշխատանքները աւարտելն ետքը, Ազերասնդրիոյ և համայնքարիկէի Յոյն Ուղղափառաց Պատ և Պատրիարք Քրիստոֆորոս Բ., 12 Փետր. 1959ին հրաւիրեց բոլոր Քրիստոնեայ Եկեղեցիներու պետերը Յունաց Ս. Էվանկէլիսոս (Աւետում) եկեղեցիին մէջ, Եկեղեցիներու միութեան համար պաշտամունք կատարելու, վերակենդանացնելով Քրիստոնէութեան սկրզբնական գարերու Ազերասնդրիոյ Եկեղեցիին վառքը:

Բնդարձակ այս եկեղեցին յատկապէս պատրաստուած էր այս պաշտամունքին համար: Ներկայ էր աւելի քան 2000 հաւատացեալներու միջազդացին բազմութիւն մը: Խոկ եկեղեցւոյ Ատեանին մէջ կը տեսնուէին նորին Ամենապատառութիւն Քրիստոփորոս Պատրիարքը իր եպիսկոպոսներով. հանգիպական կողմը կարգաւ իրենց տեղիրը գրուած էին Լատինաց Պատական Նուիրակ և Սրբազնութիւն Կոյայէ Եպս., Քաղկեդոնի Մետրոպոլիտը, Ղատի Ուղղափառաց Եպս.ը, Հայոց Առաջնորդական Փախանորդը, Յոյն Կաթոլիկներու Պատրիարկան Փախանորդը, Ղատի Կաթոլիկներու Պատր. Փախանորդը, Մարտիր Եպս.ը, Սեւելիկիոյ Յոյն Եպս.ը, Զուիցիարիական Բազուքական Հոգին Եպս.ը, Ասորուց Պատր. Փախանորդը և բազմութիւն բարձրաստիճան եկեղեցականներ:

Արդարի բացաւիկ տեսարան մը կը պարզէր եկեղեցւոյ ներքնամասը, ուր բազմաթիւ խաչվաններու և լուսավառութեանց ընդմէջէն կը տեսնուէին եկեղեցականները իրենց յատուկ տարազնե-